

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵ

ԴԺՈՒԱՕՐ Է ՓՈԽՈՒԻԼ

Մեղքի մէջ ինկած եւ աշխարհի կեանքը ապրող մարդիկ երբեմն կը գիտակցին իրենց վիճակին եւ կ'որոշեն փոխուիլ: Օրինակ, թմրեցուցիչ գործածող մը կրնայ յանկարծ որոշում առնել ալ չգործածել, կամ ստախօս մը՝ սուտը դադրեցնել, բամբասող մը՝ բամբասանփին վերջ դնել, եւ այլն: Անոնց մօտ փոփոխութիւնը ամբողջական չ'ըլլար, այլ՝ մասնակի. արմատական չ'ըլլար, այլ՝ մակերեսային: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ անոնք կ'որոշեն փոխուիլ բայց չեն որոշեր դարձի գալ: Մէկը չի կրնար իր սեփական ուժով փոխուիլ: Կը փոխուի ա՛ն միայն՝ որ դարձի կու գայ Քրիստոսի, կը խոստովանի իր մեղքերը, իր տկարութիւնները, եւ կը յանձնուի Սուրբ Հոգիին առաջնորդութեան:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Հրամայէ՛, Տէ՛ր, որ անդամալոյծին պէս առողջանամ, մէկ կողմ նետեմ ցաւերուս անկողինը, Տիրոջ տան մէջ շրջիմ քու կամարարներուդ հետ եւ Աստուծոյ գաւթին մէջ ծաղկիմ ու չմեղանչեմ:

Խորտակէ՛, Տէ՛ր, սատանային բռնութիւնը, մէկդի նետեմ անոր զօրութիւնը, արգիլէ՛ անոր յարձակումը վրաս, որպէսզի մարմինս ընդունայն վարելով՝ չտանի լայն ճամբով, որ կորուստի եւ ապականութեան կը տանի:

Ս. Եփրեմ Ասորի

ԵԹԵ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒԶԵՍ...

**ԵՐԲ ԱՆԻՐԱՎ ՄԱՐԴՈՑ
ՅԱԶՈՂՈՒԹՈՒՄԸ ԿՐ ՑԱՄՑՆԵ ՔԵԶ,
ԿԱՐԴԱՆՔ՝ Սաղմոս 10**

Տէ՛ր, ինչո՞ւ հեռու կը մնաս, ինչո՞ւ ներկայութիւնդ չես յայտնիր, երբոր ներդրեան մէջ եմ:

Ամբարիշտները ամբարտաւան կերպով կը հալածեն թշուառը. թող իրենց խորհած հնարքներուն մէջ իրե՛նք բռնուին:

Ամբարիշտը կը պարծենայիր չար ցանկութիւններովը. ընչա՛հաղ մարդը ին՛ք՝ կ'անիծէ եւ կ'անարգէ Տէ՛րը:

Ամբարիշտը բացայայտ լրբութեամբ՝ Աստուծոյ մասին չի խորհիր իսկ. իրեն համար՝ Աստուած չկայ:

Անոր գործերը միշտ յաջող են. անիկա չի հասկնար Բարձեալիդ դատաստանները, եւ լուտանքներ կ'արձակէ իր թշնամիներուն դէմ: Ինքնիքն կը խորհի. «Ոչինչ կրնայ գիտ սասանեցնել, ո՛չ մէկ չարիք կրնայ ինձի հասնիլ»: Անէ՛ծքով, նենգութեամբ եւ սպառնալիքներով լեցուն է անոր բերանը. իր խօսքերը ցաւ եւ դժբախտութիւն կը բերեն : Բնակավայրէն հեռու՝ դարան կը մտնէ, գաղտնօրէն սպաննելու համար անմեղ մարդիկը: Անոր աչքը շարունակ անբախտ գոհ մը կը փնտռէ: Առի՛ծի պէս իր դարանին մէջ կը սպասէ, գաղտնօրէն յափշտակելու համար աղբատը. եւ գայն կը յափշտակէ՛ իր ցանցին մէջ ձգելով: Կծկտած կը պտակի, եւ իր ամբողջ զօրութեամբ կ'իյնայ անպաշտպան մարդոց վրայ: Իր մտքին մէջ կը խորհի. «Բնաւ Աստուծոյ հոգը չէ, անիկա աչքերն ալ գոցեր է, որպէսզի բան չտեսնէ»:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՆԲԱԾԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak Նրազ թերթ](#)



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՍ ՌՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸՆԿՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 24 ՄԱՅԻՍ 2020

ԹԻԻ 21

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Գործք 23.12-35: Ա. Յով. 5.13-21
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՈՒ 12:12-23

ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ
12.12-23**

Յաջորդ օր ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ Չատկուան տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, արմատենիի ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով. «Ովսաննա՛, օրհնեալ ըլլայ ան որ կու գայ Տիրոջ անունով, Իսրայէլի թագաւորը»:

Յիսուս էլ մը գտնելով նստաւ անոր վրայ, ինչպէս որ Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. «Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Միոնի՛ աղջիկ, որովհետեւ թագաւորը քեզի կու գայ իշու մը աւանակին վրայ նստած»:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան ատենին, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ՝ այն ատեն յիշեցին, թէ այս կատարուածները Յիսուսի համար գրուած էին եւ իրենք այդ գրուածն էր, որ կատարեցին: Բոլորն ալ կը վկայէին, թէ Յիսուս Ղազարոսը կանչեց գերեզմանէն եւ գայն մեռելներէն յարուցանեց: Այս իսկ պատճառով Երուսաղէմ գտնուողները բոլորն ալ զինք դիմաւորելու ելան, որովհետեւ լսած էին թէ ի՛նչպէս ան յարութեան հրաշքը գործած էր: Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին. «Կը տեսնե՞ք որ բան մըն ալ չենք կրնար ընել. ահա ամբողջ աշխարհը իրեն կը հետեւի»:

Տօնին առիթով կարգ մը յոյներ ալ եկած էին Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագելու: Անոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլիայի Բեթսայիդա քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին. «Տէ՛ր, կ'ուզենք Յիսուսը տեսնել»: Փիլիպպոս եկաւ Անդրէասին ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի ներկայացուցին անոնց խնդրանքը: Յիսուս պատասխանեց. «Ահա մարդու Որդիին փառաւորուելու ժամը հասաւ»:

**ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎԱԿԱՆԵՐ**

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
23.12-35**

Յաջորդ առաւօտ կարգ մը հրեաներ իրարու ղուր Եկան եւ իրենք գիրքնէն նկարագրի տակ դնելով երդում ըրին չուտել եւ չիմել՝ մինչեւ չսպաննեն Պօղոսը: Քառասուն հոգիէն աւելի էին այս երդումը ընողները: Աստի մօտեցան քահանայապետներուն եւ երէցներուն եւ ըսին. «Մենք մեզ նկարագրի տակ դնելով երդում ըրինք բան չհաշակել, մինչեւ Պօղոսը չսպաննենք: Դուք Ատեանին անունով հազարապետին լուր դրկեցէ՛ք որ զայն ձեզի դրկէ, պատնառաքանելով թէ կ'ուզէք իր մասին աւելի ստոյգ տեղեկութիւն ունենալ: Իսկ մենք պատրաստ կ'ըլլանք արդէն եւ տակաւին հոս չհասած՝ կը սպաննենք զինք»:

Պօղոսի բնորդին այս դաւադրութիւնը իմանալով, եկաւ զօրանոց եւ Պօղոսին պատմեց: Պօղոս հարիւրապետներէն մէկը կանչելով ըսաւ. «Այս պատանին հազարապետին տար, որովհետեւ իրեն ըսելիք մը ունի»: Հարիւրապետը զայն հազարապետին տարաւ եւ ըսաւ. «Բանտարկեալ Պօղոսը զիս կանչեց եւ խնդրեց որ այս պատանին քեզի բերեմ, որովհետեւ քեզի ըսելիք մը ունի»:

Հազարապետը պատանիին ձեռքէն բռնելով մէկ կողմ տարաւ եւ հարցուց. «Ի՞նչ ունիս ըսելիք»:

Սուրբ Հոգիին արդիւնքներն են՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերութիւն, ազնուութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեղուկութիւն, ժուժկալութիւն: (Գաղ. 5:22-23)



**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ
5.13-21**

Ասիկա գրեցի ձեզի, Աստուծոյ Որդիին հաւատացողներու, որպէսզի գիտակցիք, թէ յաւիտենական կեանք ունիք: Ուստի համարակ կերպով կը դիմենք Աստուծոյ, այն վստահութամբ, որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք՝ կը լսէ մեզ: Եւ երբ գիտենք թէ մեր խնդրանքները կը լսէ, գիտենք նաեւ թէ պիտի ստանանք ինչ որ կը խնդրենք իրմէ:

Երբ տեսնես թէ հաւատացեալներէն մին գործեց մեղք մը որ մահացու չէ, աղօթէ Աստուծոյ որ կեանք տայ անոր: Ասիկա կ'ըսեմ միայն անոնց համար որոնց մեղքերը մահացու չեն, որովհետեւ մահացու մեղքեր ալ կան, որոնց համար չեմ ըսեր որ աղօթէք: Ամէն անիրաւութիւն մեղք է, բայց ամէն մեղք մահացու չէ:

Գիտենք թէ ով որ Աստուծմէ ծնած է՝ չի մեղանչեր, այլ՝ Աստուծոյ ծնունդը Քրիստոս, կը պահպանէ զայն եւ չարք անոր չի մօտենար: Թեւեւ ամբողջ աշխարհը չարին ենթակայ ըլլայ, մենք գիտենք, թէ Աստուծմէ ենք: Եւ գիտենք, թէ Աստուծոյ Որդին եկաւ ու բացաւ մեր միտքերը, որպէսզի նախնանք նշմարիտ Աստուածը: Մենք միացած ենք նշմարիտ Աստուծոյ եւ անոր Որդոյն Յիսուս Քրիստոսի: Ա՛ն է նշմարիտ Աստուածը եւ յաւիտենական կեանքը:

Որդիակներս, դուք ձեզ կուտօբերէ հեռու պահեցէ՛ք:

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ
ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱՉԱՐԳ**

Համբարձման յաջորդող Ս. Չատկի եօթներորդ Կիրակին կը կոչուի Երկրորդ Ծաղկազարդ: Այս առթիւ Ծաղկազարդի ընթերցուածները ու շարականները նոյնութեամբ կը կրկնուին:

Երկրորդ ծաղկազարդի տօնախմբութիւնը սահմաններ է Ներսէս Շնորհալիին եղբայրը՝ Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը, հիմնուելով Գրիգոր Լուսաւորիչի Խոր Վիրապի մէջ գտնուած ժամանակ պատահած մէկ աւանդական դէպքի վրայ:

Գրիգոր Լուսաւորիչը երբ կը գտնուէր Խոր Վիրապին մէջ, անոր կը սպասարկէր հրեշտակ մը: Համբարձման չորրորդ օրը՝ Կիրակի օր, հրեշտակը չերեւնար: Միւս օրը Լուսաւորիչը կը հարցնէ պատճառը եւ կը տեղեկանայ, որ այդ օրը երկնային քահանայապետութիւնը կը տօնէր Յիսուսի երկինք համբառնալը եւ նոյն օրը չորրորդ դասակարգութեան տօնն էր:

Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը յատուկ շարականով կը ճոխացնէ երկրորդ Ծաղկազարդի Կիրակին, որուն օրհնութիւնն է «Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ, զոր հոգոց լուսատուն ի պաշտպանէն իւրմէ լուեալ, եթէ տօն մեծ է այսօր իմոյ դասուն որ ի յերկինս»:

**ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ
ԽՐԱՏՆԵՐԸ**

**Աղբատներուն ողորմութիւն
ընելու մասին**

Անոնք որ շատ հարստութիւն կը հաւաքեն եւ ողորմութիւն չեն սերմաներ, դատարկ ձեռքով կը մեկնին այս աշխարհէն եւ կ'առաքուին անտանելի եւ անողորմ կրակը: Եւ Տէրը այս մէկը կ'իմացնէ երբ կ'ըսէ. «Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէ՛ք այնպէս մը, որ Աստուծոյ բարեկամութիւնը չահիք. որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք յաւիտենական յարկերուն մէջ ընդունին» (Ղուկ. 16:9): Նոյնը Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Սիրոյ հետամուտ եղէ՛ք ու նաեւ նախանձախնդիր ազատներու ողորմութեան, որովհետեւ դուք ալ Քրիստոսէ ողորմութիւն պիտի ստանաք» (Ա. Կոր. 14:1): Ո՛չ մէկ բան կը թեթեւցնէ մեղքին ծանրութիւնը, բացի ազատին տրուած ողորմութենէն եւ գութէն, ինչպէս սուրբ Դանիէլ Նաբուգոդոնոսորին կ'ուսուցանէր, երբ ան իր մեղքերուն պատնառաւ հիւանդացած էր. մարգարէին կը հարցրէր, թէ ինչպիսի դեղեր կան այս հիւանդութեան համար եւ Դանիէլ որպէս բժիշկ իրեն մօտենալով կ'ըսէր. «Ո՛վ արքայ, ո՛չ պահէր, ո՛չ արթուն ըլլալը, ո՛չ քուրճը եւ ոչ ալ առանձնութիւնը կրնան օգտակար ըլլալ, այլ գնա՛ր եւ մեղքերդ ողորմութեամբ քաւէ՛, իսկ անօրէնութիւններդ՝ ազատներուն գթալով. այս արարքն է որ քեզ պիտի արդարացնէ եւ այս նախապարհն է որ քեզ յաւիտենական կեանք պիտի առաջնորդէ» (Դանիէլ. 4:27)